

ԲԼԹԵՆԻ ԵՒ ՀԱՅՀԱՍԵՍ

ՆՈՐԱՅՐ ԲԻԶԱՆԴԱՅԻ իր « Հայկա- կան Բառարաններ » մէջ կ'ապացու- ցանէ (տպագր. Կ. Պոլիս, 1880, տպ. Քերիշճեան) որ բլթենի կը նշանակէ *Trigonella Foeniculum* L. ֆր. *Fenugrec*, լատ. *Telis* բառը, և ոչ թէ Տիրու գլ. *callosité*, կոշկուտ, ինչպէս գրուած է Գաղիանոսի բառերուն մէջ և զոր կ'ընդունի նոյնպէս Հ. Մանուէլ Զախ- շահեան, նոր Հայկազեան Բառարանը, Առձեռն Բառարան, Լամբեան:

Բլթենին կը կոչուի արար. հուլի, պարս. հիւլի, թրք. բոյ բոխումը, շում- պաղի, շեկիյո. ֆր. *fenugrec*, *séné- grain* սենեկրին: Արեւելքի մէջ իբրեւ մանուկ և իբրեւ դեղ կը գործածուի, Եւսէմէի մէջ կ'ուտեն, գիրցնող է:

Բլթենին տարեւոր բոյս է, թիթեռ- նագգիներու տոհմէն երեքնուկին (*trèfle*), առուշտին (*luzerne*) պէս երեքձի տե- րեւներ ունի, սպիտակ ծաղիկներ, մենուոր կամ երկուական հատ, տերեւներուն ա- նութէն (*aisselle*) ծլած. պտուղները եր- կայն, զերանդի պէս կ'որ են, տափակ. կը պարունակեն 10-20 սերմ, քառակուսի, անկանոն, այս հատիկները կարծր են և մութ դեղնագոյն, համը լուրիայի, ուրոնի համին կը նմանի, հոտը ծանր է:

Հնդկաստանի մէջ տեղացիք կ'ուտեն հատիկները, սերմերը, երբ թարմ են ու մատղաշ:

Կը պարունակեն լիսիգին փոսփոր:

Բլթենին գիրցնող է, զօրացուցիչ, *Mignot* կ'ըսէ թէ ձկան իւղի տեղ կը ծա- ւայէ. պէտք է հոտը անցնել և տնու- շահոտել (*aromatiser*). Իւրաքանչիւր ճաշի առեն սուրճի զգալի մը չափով աւել աւնուշով (*confiture*):

Ext. fl. di fenugrec 75 gr.
Sp. écorces oranges amères 150 gr.

Ժամանակին յոյները իրենց գերինները կը սնուցանէին անոր հատիկներովը և անասունները անոնց կեղեւներովը, նոյնը կը կատարուի այսօր Եգիպտոսի մէջ ուր Բլթենի կը մշակեն: Բլթենին ալիւրը կակուղցնող է, անութներու ծանր հոտը կ'անցընէ. կանանց ծննդական գործա- բանին մէջ Բլթենի ալիւրի տոպրակիկները զնելը այդ մասերուն բորբոքումները կ'ան- ցընէ. անկէ հանուած իւզը կը մաքրէ մազերը, կը դարմանէ մազերու թեփերը (*pellicule*):

ԱՄՓՈՓԵՆՔ. - Նորայր նոյն տունը կը համարի բլթենին և հացհամեմբ. սակայն այլ է բլթենի, այլ՝ հացհամեմբ. *nigelle* կոչուած տունը՝ որ թուրքերէն կը կոչուի լիթեք օրու, արջնդեղ, սեւ գնդիկ. ոչ միայն Նորայր այլ և ուրիշներ շփոթած են այդ երկու բոյսերը:

Ամբրտոված « ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ » ին- մէջ կը գրէ. « Բլթենի որ է հացհամեմբ. որ է հապպաթ ըս սովորան ». Գէորգ Պա- լատեցի՝ որու պարսկերէն հայերէն բա- ռագիրքը հեղինակութիւն կը ներկայացնէ իր ճշգրտեմամբ՝ կը գրէ « ԱՆԳԻՏ, հաց- համեմբ, արջնդեղ, սեւիճ (ե սեւագոյն մա- րիկ ունի զոր ցանկէ ի վերայ հացի) լիթեք օրի, արաբերէն հապպեք իս սեփա »:

Արջնդեղին, հացհամեմբին ֆրանսերէնն է *nigelle*. Նորայր, Լուսինեան և այլք շփոթած են իրարու հետ *nigelle* և *nielle*.

Nigelle, արջնդեղ, հացհամեմբ, սեւ գնդիկ, լիթեք օրի. *Nielle*, *caryophyllus* ներու տոհմէն, որուն պատկերը դրած են Հայբուսակ և Հ. Քաջունի փոխանակ արջնդեղի պատկերին. *Nielle*-ը գիտական անունով կը կոչուի *Lychnis Githago* L. = *Gith* = *Agrostis Githago* և կ'ը բուսնի ցորենի արտերուն մէջ և խիստ փասակար է զայն ուտելը թէ մարդուն և թէ անասուններուն, և զժուարին է ունզը՝ զատել ցորենէն:

Գալտ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ
Առնուիլի 1է Գոմէս:



ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ հրատարակուած Հան- դէս մը կը գրէ որ երկրին հիւսի- սային և հիւսիսային արեւմտեան լեռներու մէջ թթենի չգտնուելուն՝ շերամի որդերը կը սնուցուին Սինձի մատղաշ ճիւղերով: Արդ սխալ է Սինձ կոչել այն խոտը որ երկար ժամանակներէ հետէ Հայաստանի մէջ կ'աճի առատօրէն և կը կոչուի Սինձ, իսկական հայ անունով:

Սինձը՝ Բարդաճաղիկ (*Synantherées*) տարեւոր խոտ մըն է, գարնան կը բուսնի զիւրն ծաղիկներով, որոնք զուրս կ'իւլեն մատղաշ ճիւղերու անութներէն. այդ ճիւ- ղերը կը պարունակեն անոյշ, համեղ կաթ մը՝ զոր տղաք դաշտերու մէջ կը ծնեն:

Սինձը որ ձմրան պատուական բանջա- րեղէն մը կը կազմէ իր արմատներով՝ Ակաղեմիոյ զիտական աշխատակից Սար- զիսեանի ձեռքին տակ կը ստացուի խոշոր բոժոժներ և մեծաքանակ միտաքս: Սինձի զիտական անունն է *Tragopogon arven- sis* L. դաշտերու Սինձ, որ մշակուելով

կ'ունենանք *Tragopogon sativa* L. մշակուած Սինձ, ֆոլմօրու. *Tragopon* լատիններէն կը նշանակէ ֆօշի մօրուք, նոյն նշանակութեամբ արաբերէն *Լահիյէթ-ի-թ- թիս*. ունինք նոյնպէս գոգի նոր բառ մը: Սինձ՝ յիշուած է քանիցս հայ մատե- նագրութեան՝ ձեւագրի մէջ

« Աղետալ ճին, որ քօլմօրու, որ քաքս սաքալի որ Սինձ, որ ալալօշանկ, որ աւ- փալանը (բէլթէլ): Գօշմօրուք, Սինձ, ա- լալուշան: Սարաքս (*Taraxacum*) կա- բանջար »:

« Գօշմօրուից քամուկս, Ոսարալայիցէ իւթթիս որ Սինձի չոր կաթ որ չորա- ցնեն »:

Կալիֆօռնիոյ մէջ զպրոցական տղոց համար կը ջանան իբրեւ ծամոց (չուինկ ձըմ *chuing zum*) գործածել Սինձի կարծրացած նիւթը:

Սինձի մասին խօսած եմ « տունկերը և անոնց հայերէն անուններն զրքոյկիս » մէջ, որ առաջին անգամ երեցաւ Զօպանեանի « Անահիտին մէջ, յետոյ առանձին տետրա- կով »:

Գալտ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ

Առնուիլի 1է Գոմէս:

ՀԱՅ ՆԿԱՐՉՈՒՇԻ ՕՐ. ՄԱՅՏԱ ՄՆՏԻԿԵԱՆ

Հաճոյքով կը ծանօթացնենք « Բազմա- վէպ » ի ընթերցողներուն՝ հայ նկարչուհի Մայտա Մնտիկեանը: Միլանարնակ հայ օրիորդը վերջերս լայն յաջողութիւն գտած է իր տուած Յուցահանդէսով այդ քաղքին մէջ:

Հնգետասանամայ հասակին նուիրուած նկարչութեան արուեստին, այսօր նէ իր

հոգւոյն բովանդակ խանդավառութեամբը, և գաղափարական մաքրութեամբը կ'ար- տազրէ գործեր՝ որոնք ուշագրաւ են: Նախ տաղրէ գործեր՝ որոնք ուշագրաւ են: Նախ քան Միլանու մէջ իբր նկարչուհի իր հրապարակային յայտնութիւնը, Նիւ Եօրքի մէջ, ուր գացած էր 1948-ին իբր քու- րիսը, առարկայ դարձած է Օր. Մայտա տեղական մամուլի գնահատանքին: « Long